

Ի ՆԵՐՍԻՍԵ ԿԱԹՈՂԻԿՈՍԵ ՀԱՅՈՑ

Ներսիսի կլայնցույ՝ մեր շատ տարիներ առաջ՝ հրատարակած Զափաբերսկամ գրքոց մէջ՝ չպայ հետեւեալ Ողբա, որոյ օրինակն առ մեզ գրուած է ի Սիս, յամին 1348, ճարտար գրի և երգի մի ծեռօք, այս է Յեսու Փիլտոփիայ: Ընթերցողն իմքնիմ զգաց՝ ի՞նչ չնրմնեռամդմ և փափուկ սրտէ բլխած է, և ի՞նչ ընտանելիան տրամախօսութեամ ոճով. որ աւելի ներսիսի ամուամակից թոռամ Լամբրութեցոյն յարմարի. սակայն, ովք բովածակեր է մեր Շնորհալի Բայրապետիմ հոգու մոտաց և զգի բազմակերպ յատկութեամց չափը, որ զայս և զայսպիսիս ալ չկարծէ արտադրած և ուրիշի օրինակ ըմեայսած:

Կայր Մայր Տեղան առ խաչին, Կոյսըն Մարիամ:

Ողբալով զայս ասէլ առ Միածին որդին.

Ո՞վ անմեղ գառն Աստուծոյ, ընդ ո՞ր մեղաց պատժիս.

Ես սրբութեամբ զքեզ յլացայ, մաքուր կուսութեամբ ծնայ.

Կոյս յետ ծնընդեան քո մնացի՝ ծնելոյդ զօրութեամբ.

Անբիծ շրջեցար յերկրի, անփորձ ի մեղաց,

Մեծու ոչ արարեր մարմնով, ըստ նախաձայն բանին.

Եւ ոչ նենդութիւն գըտաւ ի բերան քո բարի.

Խշխանն աշխարհի ի քեզ ոչ եգիտ յիւրոցն:

Արդ զի՞ մատնեցար, որդեակ, խաչի և մահու.

Ո՞ւր հրեշտակին բանն ըգքէն. – թագաւորել անվախճան:

Ահա զծենուդ որ զերկինս ձգեցին՝ տարածեցին ի փայտին.

Զմատունագ՝ որ զօրէնս զրեցին՝ բեւեռեցին ի խաչիդ.

Զոտագ՝ որ ի ծովուն գնացին՝ հեղուսեալ կապեցին:

Յայտնեա ինձ, Յիսուս, զիսորհուրդս քո կամաւոր մահուանդ,

Զի հաստատեսցի սիրտ իմ՝ ի մարդկեղէն կարծեաց:

* *

Ո՞վ Մարիամ, կոյս և Մայր, տաճար լուսոյ իմոյ,

Մի՛ տկարանար զու հոգւով՝ յիմ ծածկեալ խորհըրդոյս.

Ես մարդարէիւք իմովք յառաջ զայս ցուցի.

Աբրահամ կախեալ ետես զիս խոյ ընդ Սահակայ.

Մովսէս գոշակեաց աեսանել ըզկեանս ի փայտի.

Մատիաթայ ծակեցին զծենու իմ՝ և զոտս ի փայտիս.

Հստ Սողովմնի եգին ինձ պըսակ ի փըսոց,

Հստ եսայեայ՝ իբրեւ զոշխար ի սպանդ վարեցայ.

Հստ Դանիելի սպանին զօծեալ Տեղան այսօր.

Հստ Երեմիայ՝ արկին փայտ ի հաց մարմնոյս.

Հստ Զաքարիայ՝ հայեսցին յոր խոցեցին տիգաւ:

Զիս՝ Հայր իմ մատնեաց ընդ մեղաց որդւոց Աղամայ.

Ես հնաղանդ եղէ Հօր իմոյ մինչեւ ի մահ խաչիս.

Զանէծս Աղամայ բառնամ փշեղէն պըսակաւս.

Զձեռաբն կարկամեալ փայտիւն՝ պարզեմ բեւեռօքս.

Զոտիցըն կապանս ընդ ծառոյն՝ արձակեմ հեղուսիւքս.

Դառնահամ պտղոյն ճաշակ՝ քաղցրանայ լեղեաւ.

Զկողածնին լուանամ զիսայթուած՝ կողիս վըտակօք.

Մահ իմ տայ ըզկեանս մեռելոց որք ի սկզբանէ.

Փայտ խաչիս իմոյ՝ զփայտ մահուն ի կեանս փոխարկէ:

Նընջեմ ի հող մահու նոդ մեռեալո՛ դորս ընդ իս յարուցից,

ի դժոխս թշանեմ առ հոգիսն՝ որք նն ի բանտի.

Զկապեալն արձակեմ զԱդամ, կապեմ ըզկապոյն.

ի դրախտն ուստի ել՝ տանիմ, ուր և զաւազակն:

Արդ մի՛ վըհատիր, Մարիամ, այլ խընդա յուսով.

Ես յետ յարութեան իմոյ՝ քեզ երեւեցայց:

Զօր կամն կատարել կամիմ, առ նոյն վերանամ:

* * * ΦՈԽ.

Արդ ով Տէր և որդի իմ, ում յանձն արարեր

Զմայր և զաղախին քո:

Դու յերկինս առ Հայր երթաս. ով զկեանս իմ անօրինէ

Փոխան՝ քո յերկրի աստ.

Զի թէ հրէտական նախանձն զլոյսդ հալածեցին,

ինձ՝ զի՞նչ արասցեն, որդեակ:

Ես ակն ունէի թիսուս թագ ի դրոխ եղեալ.

Եւ այժմ տեսանեմ խաչեալ.

Բան ի հրեշտակէն լրւայ, Ուրախ լեռ, բերկրեալ.

Եւ այժմ հոգով խոցիմ:

Ի ժամ ծընընդեան քո՝ հրեշտակք ցընծային,

Եւ այժմ անարդեն մարդիկ:

Մերկ ըզքեզ տեսի, որդեակ, պընդեալ ի փայտիդ...

Խաւար իմ աշացս այսօր:

* *

Ո՞վ անմեղ աղաւնի իմ, մի՛ զանգիտեր դու սրտիւ՝

ի յերկեղէ մարդկային.

Ընդ քեզ եմ յաւիտեան ես՝ որ բառնամ զարարածս իմ

Բանիւ զօրութեամբ իմով:

Ո՞վ սրտիւ սիրեցեալդ իմ, ընդ քո մաքրութեան հոգւոյդ՝

Տամ մայր քեզ ըզՄարիամ մայր իմ:

Պատուեա ստ օրինաց ըզնա, որպէս և տեսեր դու յիս՝

Հնաղանդ լինելով նըմա:

* *

Եւ մեզ աղօթիւք Մօր քո և Յովհաննու սիրելույն՝

Շնորհեա զթողութիւն մեղաց:

Եւ քեզ երգեսցուք ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյն ըզփառս.

Բայժմուս և յաւիտենից. ամէն:

